

ձեռք բեռած՝ եւրոպական համալսարաններու հետեւելով Ահա այս երկարատե արդիւնաւոր գործունէութիւնը ազգովին և բոտ արժանւոյն առնելու համար, որոշուեցաւ հատարել Ազգ. Կեդր. Վարժարանի Քսանհինգամեայ Յօրելեանը, և սոյն Յերելեանին բարոյական ու նիւթական կրկին արդիւնքները ապահովելու նպատակաւ, վարժարանին արդի պատ. Խնամակալութեան առաջարկութեամբ՝ Ազգ. Կեդր. Վարչութեան պատկ. Քաղ. ժողովը կազմեց Յօրելեանական Յանձնախումբ մը՝ բարձր նախագահութեամբ Ամեն. Տ. Նղիշէ Ա. Արք. Գաբրիէանի:

Յօրելեանական Յանձնախումբս, ձեռնարկելով գործի, որոշեց մեծ շքով և արժանավայել հանդէսներով կատարել այս տօնը, վարժարանին հիմնադիր հոգելոյս Ներսէս Պատրիարքի մահուան տարեդարձին, հետեւալ կարգաւ.

Ա. Հինգշաբթի, հոկտ. 25, պիտի պատարագէ Յանձնախումբին նախագահ Սրբազան Հայրը և պատարագէն ետք հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Բ. Ուրբաթ, հոկտ. 26, Յօրելեանական հանդէս և բաշխում վկայականաց վերջացող շրջանի ընթացաւարտներուն:

Գ. Շաբաթ, հոկտ. 27, թատերական և զեղարուեստական շքեղ երեկոյթ:

Այս առթիւ Յանձնախումբս զգալով վարժարանին հիմնարկութեան և քսանհինգամեայ գործունէութեան մասին լիակատար պատմութեան մը հրատարակութեան պէտքը, անոր խմբագրութիւնն յանձնեց իր մէջէն ձեռնհաս անձերէ կազմուած մասնախումբի մը, որ արդէն իսկ ձեռնարկած է աշխատութեան: Մինչև Յօրելեանի թուականը կարելի պիտի ըլլայ այս աշխատութիւնը հրատարակ հանել:

Յանձնախումբս, իր առաջին գումարման մէջ իսկ նկատի առնելով վարժարանին ընդարձակման և աւելի վայելուչ չէնքի մէջ փոխադրման մասին յայտնուած ընդհանուր բաղձանքը, ինք ևս ուզեց աջակցիլ այդ կենսական գործին և իբրև առաջին քայլ՝ դիմում րրաւ Ազգ. Կենդր. Վարչութեան: Ուրախ ենք յայտնելու, որ Կենդր. Վարչութիւնը խոստացած է կարևոր չափով մը սատարել սոյն բաղձանքին իրագործման: Աստահ ենք թէ ամբողջ Հայ ժողովուրդը և մասնաւորապէս Կենդրոնականի նախկին սաները պիտի փութան իրենց օժանդակութիւնը բերել՝ լրացնելու համար շինութեան և այլ յարակից գիտական ու գրական պէտքերու հարկ եղած ծախուց ամբողջական գումարը: Այսպիսով, մեծ յոյս ունինք, որ արդէն տարի մը ետք՝ Ազգ. Կենդր. Վարժարանի 1913—1914 շրջանը պիտի կրնայ սկսիլ իր նոր շէնքին մէջ:

Յանձնախումբս վստահ Չեր կրթասիրութեան և ազգային նախանձախնդրութեան վրայ, որով անշուշտ կը փափագիք այս միակ ազգային երկրորդական վարժարանը իր գերին աւելի վայել վիճակի մը մէջ առնել, ներկայ կոչով կը դիմէ Ձեզ՝ խնդրելով Ձեր բարոյական

և նիւթական օժանդակութիւնը:  
 Լիայոյս ենք, որ գնահատելով յանձնաժողովին առաջադրած գործին գերազանց կարևորութիւնը, պիտի չզլանաք ձեր մասնակցութիւնը անոր լուազոյն կերպով իրականացման համար:

Ընդունեցէք, ազնիւ Տէր, մեր կանխայայտ շնորհակալութեան և անկեղծ յարգանքներուն հաւատարմքը:

Ի դիմաց քսանհինգամեայ Յօրելեանական Յանձնախումբի Ազգ. Կենդրոնական Վարժարանի  
 Առեւտարատ՝ Ե. Եակոբեան  
 Ասեւադպիր՝ Վ. Թէրէեան

**ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԿՐՈՒԹԵԱՆ**

Ըջմիածին, յունիսի 1-ին.

Հայոց գրերի գիւտի 1500-ամեակի և տպագրութեան 400-ամեակի առթիւ Ն. Սրբութեան կարգադրութեամբ կազմուած և հաստատուած է խմբագրական մի մասնաժողով, որի վրայ պարտաւորութիւն է դրուած մի գիտական ժողովածու հրատարակել միացեալ երկու մեծ տօներին վայել լրջութեամբ և ճոխութեամբ ժողովածուի չիւթ պէտք է լինի ընդարձակ մտքով հասկացուած հայագիտական ամեն մի յօդուած, այսինքն հայ պատմութեան, մատենագրութեան, լեզուի, հնագիտութեան և արուեստի, այլարհագրութեան, ազգագրութեան ևն. վերաբերեալ, որ կընդունուի խմբագրական մասնաժողովի կողմից: Յօդուածի ծաւալը պէտք է լինի ոչ աւելի, քան երկու տպագրական թերթ 16<sup>0</sup>: Իւրաքանչիւր երեսի համար նշանակուած է մի ուրիշ վարձատրութիւն: Այսու Ս. Աթոռի կարող միարաններէից և Հեմարանի ուսուցիչներէից պատ՝ հրաւիրուած են և գրսի հայ բանասէրները մասնակցելու մեր կազմելիք ժողովածուին: Յօդուածները պէտք է ուղարկուեն ոչ ուշ քան հոկտեմբերի վերջը: Չընդունուած յօդուածները հեղինակի ցանկութեան համեմատ յետ կուղարկուին իրենց:

Խմբագրական մասնաժողովի նախագահ՝  
 Դարեգին վարդապետ  
 Քարտուղար՝ Ստեփան Կանայեան

**ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԹԵՐԹԵՐԻՑ**

Հողային գրամանց խնդիրը

Պատրիարքարանէ հետուեալ շրջաբնականը գրկուեցաւ Առաջնորդներուն.

Գիտէք արդէն թէ՞ կայս. Իրատէով՝ որ 1909 տարւոյ Օգոստոս 27-ին հաղորդուած է բոլոր կուսակալութեանց, որոշուած էր որ անշարժ ստացուածաց գրաման խնդիրները վարչական եղանակաւ կարգադրուէին: